ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 2247-Ա/2 **«27» հոկտեմբերի, 2023 թ.**

«ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՄ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ (ԲԱԺԻՆՆԵՐԻ) ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ - 2023» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1122 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգով», հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի օգոստոսի 3-ի N 1322-Ա/2 հրամանով ստեղծված մասնագիտական փորձագիտական խորհրդի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի նիստի N 3 արձանագրությունը և ելնելով բյուջետային հատկացումների ծավալից՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել մրցութային կարգով ընտրված գիտական թեմաների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին՝

- ապահովել մրցույթի արդյունքների վերաբերյալ հայտատուներին սահմանված կարգով իրազեկումը,
- կազմակերպել համապատասխան պայմանագրերի կնքումը,
- ֆինանսավորման երաշխավորված գիտական թեմաների ֆինանսավորումը սկսել 2023 թվականի նոյեմբեր ամսից:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի նախագահ Սարգիս Հայոցյանին:

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված
ՀՀ ԿԳՄՍ նախարարի
2023 թ. հոկտեմբերի 27-ի
N 2247 -Ա/2 հրամանի

ՑԱՆԿ
ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ (ԹԵՄԱՏԻԿ) ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ
«ԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ԿԱՄ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ (ԲԱԺԻՆՆԵՐԻ) ԱՄՐԱՊՆԴՄԱՆՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ - 2023» ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ԹԵՄԱՆԵՐԻ

	Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն հայրանուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
1	Նյութագիտություն	23LCG-2F001	Այդինյան Սոֆիյա Վարդգեսի	Մարգարտախեցու միկրոկառուցվածքով կենսանմանակ բարձրէնտրոպիական MAX ֆազեր այլընտրանքային էներգիայի աղբյուրներում կիրառության համար	ՀՀ ԳԱԱ «Ա.Նալբանդյանի անվան քիմիական ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ
2	Երկրի մասին և դրան հարակից բնապահպանական գիտություններ	23LCG-1E016	Ասմարյան Շուշանիկ Գուրգենի	Գեոէկոլոգիական հետազոտություններում ակտիվ հեռազննման համակարգերի ներդրման ուղղությամբ կարողությունների հզորացում	ՀՀ ԳԱԱ «Էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ
3	Ֆիզիկա և աստղագիտություն	23LCG-1C008	Ավետիսյան Ռոզա Վախթանգի	Գադոլինիումի կիրառական իզոտոպների առաջընթացի ուսումնասիրությունը ԱԱԳԼ նոր ստեղծված միջուկային սպեկտրոսկոպիայի լաբորատորիայում	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
4	Կենսաբանական գիտություններ	23LCG-1F010	Ավթանդիլյան Նիկոլայ Վլադիմիրի	Բջջային ազդանշանային համակարգերի բազմաթիրախային կարգավորումը կրծքագեղձի քաղցկեղի և շաքարախտի փորձարարական մոդելներում. բացահայտել երկու հիվանդությունների բուժման մեկ ուղի	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
5	Կենսաբանական գիտություններ	23LCG-1F002	Բաբայան Նելլի Սամվելի	Հիբրիդային in silico/in vitro թեստ-համակարգ փոքր մոլեկուլների քաղցկեղածին պոտենցիալի կանխատեսման համար	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
6	Կենսաբանական գիտություններ	23LCG-1F007	Գասպարյան Արսեն Հակոբի	Քարաքոսերի հետազոտությունների զարգացում և կարողությունների հզորացում Հայաստանում	ՀՀ ԳԱԱ «Ա.Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
7	Կենսաբանական գիտություններ	23LCG-1F005	Գևորգյան Գոռ Արտակի	ՀՀ խոշոր հիդրոէկոհամակարգերի վրա մարդածին ազդեցության էկոլոգիական վտանգների ուսումնասիրություն	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ

	Բնագավառ	Ծածկագիր	Ազգանուն անուն հայրանուն	Թեմայի վերնագիր	Կազմակերպություն
8	Կենսաբանական գիտություններ	23LCG-1F006	Գևորգյան Հասմիկ Շավարշի	Սինանտրոպ կենդանիների դերը Հայաստանի քաղաքային բնակավայրերում մակաբուծային զոոնոզների շրջանառության, պահպանման և փոխանցման գործում և դրանց կանխարգելման և վերահսկման ռազմավարությունների մշակում	ՀՀ ԳԱԱ «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ
9	Ընդհանուր բժշկություն	23LCG-3A020	Ենկոյան Կոնստանտին Բորիսի	Նեյրոնային զարգացման և աճի տեղաշարժերի տրանսլյացիոն հետազոտությունը որպես աուտիզմի սպեկտրի խանգարումների առանցքային պաթոգենետիկ մեխանիզմ	«Երևանի Մ.Հերացու անվան պետական բժշկական համալսարան» հիմնադրամ
10	Նյութագիտություն	23LCG-2F012	Զաքարյան Հայկ Աշոտի	Նյութերի հաշվարկային նախագծում և բացահայտում էներգիայի պահպանման կիրառությունների համար	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
11	Կենսաբանական գիտություններ	23LCG-1F014	Զաքարյան Հովակիմ Սարգսի	Հակավիրուսային նոր միացությունների հայտնաբերումը in silico և in vitro մեթոդների համադրմամբ	ՀՀ ԳԱԱ «Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ
12	Կենսաբանական գիտություններ	23LCG-1F003	Թռչունյան Կարեն Արմենի	Գլոբալ կարգավորիչների և տրանսկրիպցիոն ակտիվատորների դերը միկրոօրգանիզմների նյութափոխանակության և կենսաէներգետիկական պարամետրերի կարգավորման գործընթացում խմորման և շնչառության պայմաններում	«Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
13	Ֆիզիկա և աստղագիտություն	23LCG-1C018	ժամկոչյան Սիմոն Վահանի	Ռադիոհաճախություններով կառավարվող ժամանակաչափ և հիպերմիջուկային ուսումնասիրությունների նոր հնրավորություններ	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ
14	Քիմիա	23LCG-1D019	Հարությունյան Արփինե Սաշայի	CO2-ի ֆիքսումը իոնական հեղուկներում. համապարփակ ուսումնասիրություն նոր գիտելիքահեն կիրառական մշակումների համար	ՀՀ ԳԱԱ «Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն» ՊՈԱԿ
15	Ֆիզիկա և աստղագիտություն	23LCG-1C004	Սահակյան Նարեկ Վարդանի	Բլազարների բազմամեսենջեր և բազմալիքային ուսումնասիրություն. մեքենայական ուսուցման մոտեցում	ՀՀ ԳԱԱ «ԻԿՐԱՆԵՏ կենտրոն» միջազգային կազմակերպություն
16	Ֆիզիկա և աստղագիտություն	23LCG-1C011	Քառյան Գևորգ Արարատի	Տաու լեպտոնի ֆիզիկայի ուսումնասիրությունը և նոր մասնիկների որոնումները Belle II գիտափորձում՝ կատարելագործված Մոնտե Կառլո գեներատորների և մեքենայական ուսուցման ալգորիթմների օգտագործմամբ	«Ա.Ալիխանյանի անվան ազգային գիտական լաբորատորիա (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ)» հիմնադրամ